«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ՀԵՏԵՒՅԱԼ 4 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ----------2
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՖՐԻԴԸՄ ՀԱՌԻՍԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ----------3
ՀՈՒՆԻՍԸ ԼԳԲՏՔԻ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՄԻՍՆ Է----------4
ԵՐԿՈՒ ՏՂԱՄԱՐԴ ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՏՐԱՆՍ ԿՆՈՋԸ ԻՐ ԻՄԿ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԴԱՆԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՈՎ ՀԱՓՇՏԱԿԵԼ ՆՐԱ ՀԵՌԱԽՈՍԸ----------6
ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԴԱՍԸՆԹԱՑ ԼԳԲՏԻՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ----------8
«ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԿՏԻՎԻԶՄ՝ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑ ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ-------10
ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԲԱՑ ԿԱՆՉ----------11
ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՄԲԵՐՈՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆՑՆԵԼՈՒ ԿՈՉԵՐ TIKTOK-ՈՒՄ----------12
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-----13
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՄՍՎԱ ԱՌԹԻՎ ԱՄՆ ԴԵՄՊԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ----------14
ՀԱՐԱՅԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ, ՄԱՍ 1-ԻՆ----------15
ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ---18

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ 4 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Մայիսի 17-ին Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն ՀԿ-ի սոցիալական աշխատող Անուշ Գաբրիելյանի հետ «Ընտանեկան բռնություն, սեռական բռնություն, կանանց և երեխաների նկատմամբ բռնություն» թեմայով համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 10 Տրանս և ԼԳԲԻՔ+ սեքս աշխատող և համակիրներ:

Մայիսի 17-ին Հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա (IDAHO-BIT-ի) թեմայով համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 30 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Մայիսի 18-ին «Ընտանեկան բռնություն» թեմայով համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 13 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Մայիսի 25-ին Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն ՀԿ-ի սոցիալական աշխատող Անուշ Գաբրիելյանի հետ «Ընտանեկան բռնություն, սեռական բռնություն, կանանց և երեխաների նկատմամբ բռնություն» թեմայով համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 10 Տրանս և ԼԳԲԻՔ+ սեքս աշխատող և համակիրներ:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն մայիս ամսվա ընթացքում ընդունել է թվով 184 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ, որոնք օգտվել են կազմակերպության կողմից իրականացվող հոգեբանական, իրավաբանական, կրթական, տեղեկատվական և սոցիալական ծրագրերի շրջանակներում տրամադրվող ծառայություններից:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՖՐԻԴԸՄ ՀԱՈՒՍԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

Սույն թվականի հունիսի 1-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը իր գրասենյակում հյուրընկալեց Հայաստանում մարդու իրավունքների հիմնահարցերին նվիրված հանդիպում – քննարկում, որը նախաձեռնել էր Ֆրիդրիխ Հաուս կազմակերպությունը:

Հանդիպմանը ներկա էին Ֆրիդրիխ Հաուս կազմակերպության նախագահ Մայքլ Աբրամովիցը, Եվրոպայի ու եվրասիական ծրագրերի տնօրեն Մարկ Բեհրենդտը, ովքեր Հայաստան էին ժամանել Ժողովրդավարության հայկական ֆորումին մասնակցելու նպատակով, ինչպես նաև Ֆրիդրիխ Հաուսի հայաստանյան ներկայացուցիչներ Անդրանիկ Շիրինյանը և Սոնա Մխիթարյանը: Հանդիպում-քննարկմանը մասնակցում էին քաղհասարակության անդամներ ու ոլորտում գործող կազմակերպություններից Կանանց Ռեսուրսային Կենտրոնի, Մարդու Իրավունքների Եզդիական Կենտրոնի, Մարդու իրավունքների տուն Երևանի, Փինք Արմենիայի և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ ՀԿ-ի ներկայացուցիչները:

Հանդիպման օրակարգում էին Հայաստանի Հանրապետությունում ԼԳԲՏԻՔ անձանց, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց և երեխաների խնդիրները և մարդու իրավունքների այլ հիմնահարցեր:

Քննարկվեց մարդու իրավունքների առկա իրավիճակը, հիմնական մարտահրավերները, դրանց հաղթահարման մարտավարությունները և Ֆրիդրիխ Հաուս կազմակերպության դերը Հայաստանի Հանրապետությունում իրավահավասարության հաստատման գործում:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն բարձր է գնահատում ոլորտում գործող կազամակերպությունների և շահագրգիռ կողմերի հետ մշտական երկխոսությունը և համագործակցությունը: Միավորելով մեր ռեսուրսները, համատեղ վերլուծելով և քննարկելով գոյություն ունեցող խնդիրները՝ մենք հետևողականորեն շարունակելու ենք աշխատել, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում ամրապնդենք ժողովրդավարությունը և կառուցենք իրավական պետություն:

ՀՈՒՆԻՍԸ ԼԳԲՏՔԻ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՄԻՍՆ Է

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն շնորհավորում է Տրանս և ԼԳԲԻՔ համայնքին Հպարտության ամսվա կապակցությամբ: Ամեն տարի ԼԳԲՏԻՔ համայնքի ներկայացուցիչները համախմբվում են՝ նշելու հունիս ամիսը որպես Հպարտության ամիս՝ շքերթների, միջոցառումների և տոնակատարությունների միջոցով: Հպարտության ամսվա նպատակն է սատարել ԼԳԲՏԻՔ անձանց և պայքարել իրավահավասարության համար՝ անկախ սեռական կողմնորոշվածությունից կամ գենդերային ինքնությունից: Ըստ Միջազգային ԼԳԲՏԻՔ+ Ճանապարհորդությունների Ասոցիացիայի կազմած 2023 Համաշխարհային Գեյ Հպարտության Օրացույցի՝ այս տարի ամբողջ աշխարհում Հպարտության ամսվա ընթացքում տեղի են ունենալու 83 միջոցառումներ, որոնցից առավել նշանակալիցներն են Մադրիդի, Սան Պաուլոյի, Սան Ֆրանցիսկոյի և Նյու Յորքի շքերթները, որոնց ամեն տարի մասնացում է մինչև 5 միլիոն մարդ:

Հպարտության ամսվա ընթացքում կարևոր է խոսել ԼԳԲՏԻՔ համայնքի գրանցած հաջողություններից ու նվաճումներից՝ այս տարի ամուսնության ինստիտուտն իրականություն է դարձել Անդորրայի, Կուբայի, Կուրասաոյի, Մեքսիկայի, Սլովենիայի և Շվեյցարիայի ԼԳԲՏԻՔ զույգերի համար, Կիպրոսում և Հնդկաստանում արգելվել է կոնվերսիվ թերապիան, Իսպանիայում տրանս անձինք արդեն կարող են փոխել իրենց սեռը՝ առանց հոգեբանական խորհրդատվության, Թայվանում ԼԳԲՏԻՔ զույգերը հնարավորություն են ստացել երեխա որդեգրել, իսկ Կուկի կղզիները միացել է նույնասեռականությունը ապաքրեականացրած երկրների շարքին: Չնայած, որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս պատշաճ օրենսդրական կարգավորումների չի մցրել ԼԳԲՏԻՔ անձանց իրավահավասարությունը ապահովելու համար, սակայն առկա է նաև դրական առաջընթաց, օրինակ այս տարի վերացվել է ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հրամանի դրույթը, որի համաձայն նույնասեռական լինելը արյան դոնորության արգելք էր:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ակտիվորեն զբաղվում է Հայաստանում Տրանս և ԼԳԲԻՔ անձանց հիմնահարցերով՝ հարյուրավոր շահառուների տրամադրելով անվճար իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն, ապահովելով ներկայացուցչություն դատարաններում, կազմակերպելով տարատեսակ կրթական, ժամանցային հանդիպումների և քննարկումների և հնարավորություն ընձեռելով մասնակցել տարբեր մասանագիտական դասընթացների: 2016 թվականից ի վեր կազմակերպության համառ աշխատանքի արդյունքում հեշտացվել է տրանս անձանց անվանափոխության գործընթացը, ինչը այժմ հնարավոր է կատարել առանց նախկինում պարտադիր անձի տրանսզենդեր լինելը փաստող 3 անձանց վկայության և պարտադիր հոգեբանական եզրակացության: 2017 թ.-ին առաջին անգամ ՀՀ-ում «Իրավունքի կողմ» ՀԿ-ն կազմակերպել է Տրանս Ճամբար, իսկ ՀԿ-ի իրավաբանական թիմի ջանքերով 2018 թ.-ին առաջին անգամ Դատարանի կողմից ճանաչվել է սեռական կողմնորոշման և (կամ) գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրականության հիմքով իրավունքների խախտումը, ինչը ՀՀ-ում նախադեպային որոշում է: 2022 թ.-ին «Իրավունքի կողմ» ՀԿ-ն հիմնել է համայնքային ապահով կենտրոն, որը յուրաքանչյուր ամիս հյուրընկալում է հարյուրավոր Տրանս և ԼԳԲԻՔ անձանց, նրանց ընտանիքի անդամների ու աջակիցների: Կազմակերպությունը նաև հետևողականորեն հավաքագրում և փաստագրում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականության և բռնության դեպքերը. ցավոք, Հայաստանում Տրանս և ԼԳԲԻՔ անձինք շարունակում են բախվել խարանի, խտրականության, ճնշման և բռնության իրենց կյանքի տարբեր ոլորտներում, ինչի վկայությունն էին վերջին տարվա ընթացքում փաստագրված ֆիզիկական բռնության և ատելության կոչերը:

+

Այս խոչընդոտների առկայության պայմաններում առավել կարևոր է Տրանս և ԼԳԲԻՔ ակտիվիստների և ոլորտում գործող կազմակերպությունների աշխատանքի շարունակականությունը և պայքարելու վճռականությունը: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր Տրանս և ԼԳԲԻՔ+ ակտիվիստներին, ովքեր իրենց ուսերին են վերցրել հանուն հավասարության և անվտանգության պայքարի դժվարին աշխատանքը և ճանապարհ են հարթում առաջընթացի համար: Այսօր Հայաստանում օրակարգային է ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ խտրականությունը քրեականացնող օրենքի ընդունումը, գենդերի իրավական ճանաչումը, տրանս անձանց համար բժկական ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև ոստիկանության անգործությունն ու անպատժելիության մթնոլորտը հավերժացնող վարքագծերի վերացումը:

Մենք շարունակելու ենք պայքարել, որպեսզի յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի լինի ընդունված և հարգված՝ անկախ սեռական կողմնորոշվածությունից, գենդերային ինքնությունից և գենդերային ինքնաարտահայտումից:

Քանի դեռ մեզանից որևէ մեկն ազատ չէ, մեզանից ոչ մեկն ազատ չէ:

ԵՐԿՈՒ ՏՂԱՄԱՐԴ ԾԵԾԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՏՐԱՆՍ ԿՆՈՋԸ ԻՐ ԻՍԿ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԴԱՆԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՈՎ ՀԱՓՇՏԱԿԵԼ ՆՐԱ ՀԵՌԱԽՈՍԸ

Երեկ, սույն թվականի հունիսի 11-ին՝ երեկոյան ժամը 23:00-ից 24:00-ի ընկած ժամանակահատվածում, երկու տղամարդ հարձակվել են տրանս կնոջ վրա իր իսկ բնակարանում և ենթարկել դաժան ծեծի: Տղամարդիկ տրանս կնոջը գցել են գետնին և հարվածել նրա մարմնի տարբեր մասերի՝ պատճառելով մարմնական վնասվածքներ և կապտուկներ: Ապա, դանակի կիրառման սպառնալիքով, հափշտակել են տրանս կնոջ բջջային հեռախոսը և հեռացել:

Տրանս կինը դեպքի առնչությամբ անմիջապես դիմել է ոստիկանություն:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմը ներգրավված է սույն գործի շրջանակներում և ապահովելու է իրավական ներկայացուցչություն գործի բոլոր փուլերում: Տրանս կինը կստանա Արագ Արձագանքման Կանանց ֆոնդի աջակցությամբ «Իրավունքի կողմ» ՀԿ-ի կողմից տրամադրվող բռնության ենթարկված տրանս անձանց համար արագ արձագանքման ֆինանսական օգնություն, որպեսզի կարողանա արագ վերականգնվել իր նկատմամբ բռնությունից և թեթևացնել այն մարտահրավերները, որոնց բախվում է այս դժվարին փուլում:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն դատապարտում է գենդերային հիմքով բռնությունը և հետամուտ է լինելու դեպքի ամբողջական բացահայտմանը և մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն: Ցանկանում ենք ընդգծել, որ վերջին ժամանակներում նկատվում է տրանս ԼԳԲԻՔ անձանց ֆիզիկական բռնության ենթարկելու դեպքերի աճ, ինչի վկայությունն են վերջին տարվա ընթացքում փաստագրված ֆիզիկական բռնության դեպքերը և ատելության կոչերը: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունում այսօր առկա է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ բռնությունը հավերժացնող անպատժելիության մթնոլորտ՝ պայմանավորված թերի օրենսդրական կարգավորումներով, Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականությունը քրեականացնող օրենքի բացակայությամբ և անկատար իրավակիրառ պրակտիկաներով, ինչը պարարտ հող է ստեղծել Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ոտնձգությունների ու բռնության համար:

«Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպությունը հետևողականորեն հավաքագրում և փաստագրում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականության և բռնության դեպքերը և ՀՀ ոստիկանությանը հորդորում պատշաճ հետաքննություն իրականացնել բռնարարներին հայտնաբերելու և օրենքի ողջ խստությամբ պատասխանատվության ենթարկելու համար:

Կրկին կոչ ենք անում՝

ՀՀ ոստիկանությանը, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին և պատկան մարմիններին ապահովել Տրանս ԼԳԲԻՔ անձանց անվտանգությունը և ՀՀ սահմանադրությամբ նրանց տրված բոլոր իրավունքները:

Դիվանագիտական ներկայացուցիչներին, միջազգային ֆինանսավորողներին, որոնք իրենց ռեսուրսները և միջոցներն ուղղում են ՀՀ-ում արադարադատության բարելավմանը և հավասարության հաստատմանը, քայլեր ձեռնարկել կանխելու բռնությունը և խտրականությունը համայնքի անդամների նկատմամբ:

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ. ԴԱՍԸՆԹԱՑ ԼԳԲՏԻՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կազմակերպել էր «Ճգնաժամներին արձագանքման դասընթաց» Տրանս և ԼԳԲԻՔ երիտասասրդների համար: Դասընթացը իրականացվում էր Կանանց Գլոբալ Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և նպատակ ուներ Տրանս և ԼԳԲԻՔ երիտասարդներին զինել հմտություններով, որպեսզի նրանք կարողանան արդյունավետորեն արձագանքել տարատեսակ ճգնաժամերին ու մարտահրավերներին, որոնց կարող են հանդիպել իրենց կյանքում: Դասընթացին մասնակցում էին 20 Տրանս և ԼԳԲԻՔ երիտասարդներ, իսկ դասընթացավարը «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանն էր:

Դասընթացի ընթացքում մասնակիցները համակողմանի պատկերացում կազմեցին ֆինանսական, քաղաքական, տնտեսական, էկոլոգիական և այլ տեսակների ճգնաժամերի մասին՝ առանձնահատուկ կենտրոնանալով Տրանս և ԼԳԲԻՔ անձանց եզակի կարիքներին, այն ճգնաժամերին, որոնց նրանք բախվում են իրենց կյանքի տարբեր ոլորտներում:

Վերջին մի քանի տարվա ընթացքում տեղի ունեցած տնտեսական և աշխարհաքաղաքական բազմաթիվ գործընթացներ իրենց հետքն են թողել Հայաստանում տրանս և ԼԳԲԻՔ անձանց կյանքի և կարիքների վրա և «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը յուրաքանչյուր դեպքում մշակել է համապատասխան ռազմավարություն՝ արդյունավետորեն այդ խնդիրներին արձագանքելու համար:

2020 թ.-ին Covid-19-ով պայմանավորված համաշխարհային պանդեմիայի պատճառով ամբողջ աշխարհում սկսվեց տնտեսական ճգնաժամ, և ՀՀ-ում նույնպես բազմաթիվ Տրանս և ԼԳԲԻՔ անձինք կորցրեցին իրենց եկամտի հիմնական աղբյուրը և հայտվեցին ծայրահեղ խոցելի ֆինանսական իրավիճակում: Չնայած իրականացված բազմաթիվ օգնության ծրագրերի՝ այս ճգնաժամի հետևանքները Տրանս և ԼԳԲԻՔ անձանց համար մինչ այսօր լիովին չեն վերացել:

2021 թ.-ին Արցախյան՝ 44 օրյա պատերազմը էլ ավելի խորացրեց գոյություն ունեցող ճգնաժամը, որի ընթացքում ավելի վատթարացավ առկա տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև ատելության խոսքի թիրախ դարձան Տրանս և ԼԳԲԻՔ անձինք:

2022 թ.-ին արդեն իսկ համաշխարհային քաղաքական զարգացումները՝ ի դեմս ռուս-ուկրաինական պատերազմի, հանգեցրեցին դեպի Հայաստան ներգաղթյալների մեծ հոսքի, և բազմաթիվ ԼԳԲՏԻՔ անձինք տեղափոխվեցին Հայաստան՝ համալրելով «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի շահառուները թիվը, ինչի արդյունքում կազմակերպությանը վերանայեց իր ռազմավարությունը և ճգանաժամին համահունչ փոփոխեց այն: Այս ներգաղթով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցավ գնաճ, մասնավորապես գրանցվեց վարձով բանակարանների գների կտրուկ աճ, ինչը անմիջական ազդեցություն ունեցով վարձով բնակավող Տրանս և ԼԳԲԻՔ անձանց տնտեսական դրության վրա, բազմաթիվ անձինք հայտնվեցին դրսում կամ ստիպված եղան կրկնակի գին վճարել բնակարանի համար: Նշենք նաև, որ բացի քաղաքական համատեքստով պայմանավորված ճգնաժամերից, ՀՀ-ում շարունակում են գոյություն ունենալ բազմաթիվ առկախ խնդիրներ, օրինակ Տրանս անձանց համար բժշկական ծառայությունների, հորմոնաթերապիայի բացակայությունը, ընտանեկան բռնությունը և այլն, որոնք Տրանս և ԼԳԲԻՔ անձանց ավելի խոցելի են դարձնում ցանկացած արտաքին ճգնաժամի նկատմամբ:

Արդիական օրինակների և նախադեպերի, և «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դրանց արձագանքելու օրինակի ուսումնասիրության միջոցով հակաճգնաժամային դասընթացի մասնակիցները սովորեցին ճգնաժամերի կանխարգելման, արդյունավետ ռազմավարություններ կազմելու և հետճգնաժամային վերականգնման հմտություններ:

Կազմակերպելով նման դասընթացներ՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նպատակ ունի հզորացնել և բարձրացնել Տրանս և ԼԳԲԻՔ երիտասարդների կարողությունները՝ նպաստելով նրանց բարեկեցությանը և մասնագիտական զարգացմանը: Դասընթացի ընթացքում ձեռք բերված հմտությունները մասնակիցներին ոչ միայն հնարավորություն կտան հաղթահարել անձնական ճգնաժամերը, այլ նաև կօգնեն նրանց արդյունավետորեն լուծել իրենց համայնքների առջև ծառացած տարատեսակ խնդիրներ:

«ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԿՏԻՎԻԶՄ՝ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑ ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, Հպարտության ամվսա միջոցառումների ու ծրագրերի շրջանակներում, կազամակերպել էր «Շահերի պաշտպանություն և ակտիվիզմ՝ հանուն սոցիալական ներառականության» թեմայով դասընթաց Տրանս և ԼԳԲԻՔ երիտասարդների համար: Դասընթացը իրականացվում էր Աստրեան Հանուն Արդարության Լեսբիների հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և նպատակ ուներ Տրանս և ԼԳԲԻՔ երիտասարդներին զինել ադվոկացիոն հմտություններով, որպեսզի նրանք կարողանան արդյունավետորեն պաշտպանել իրենց իրավունքները և կայուն փոփոխություններ իրականացնել իրենց համայնքներում: Դասընթացին մասնակցում էին 25 Տրանս և ԼԳԲԻՔ երիտասարդներ Երևանից և ՀՀ մարզերից:

Դասընթացի ընթացքում մասնակիցները համապարփակ գիտելիքներ ստացան ԼԳԲՏԻՔ շարժման պատմության ու ներկա հիմնախնդիրների ու օրակարգային հարցերի վերաբերյալ: Խոսվեց առցանց հարթակներում ակտիվիզմ իրականացնելու ու արշավներ վարելու սկզբունքներից, ինչպես նաև առցանց հարթակներում ԼԳԲՏԻՔ անձանց թիրախավորող խարանից, խտրականությունից ու բռնության կոչերից պաշտպանվելու մասին: Վերջին տարիներին՝ սոցիալական ցանցերի զարգացմանը զուգահեռ, մեծ թափ է ստացել նաև առցանց գենդերային բռնությունը, և դեռևս չկան համապատասխան կարգավորումներ այդ բռնությունից տուժող անձանց պաշտպանելու համար, ինչը յուրաքանչյուր անհատի ուսերին է թողնում անվտանգ առցանց միջավայր ստեղծելու պատասխանատվությունը:

Դասընթացի մյուս հատվածը նվիրված էր Տրանս և ԼԳԲԻՔ անձանց սոցիալական ներառականության խթանմանը և փոխօգնության միջոցով մարտահրավերներին դիմակայելու հմտությունների զարգացմանը: Ստեղծվեց անկաշկանդ միջավայր, որտեղ յուրաքանչյուր մասնակից կարողանում էր արտահայտել իր կարծիքները և մասնակցել քննարկումներին, խմբային աշխատանքների ու տարաբնույթ գործնական աշխատանքների, որոնք ամբողջականորեն ուղղված էին շահերի պաշտպանության հմտությունների ձևավորմանը, ներանձնային և հասարակության հետ կոնֆլիկտների հաղթահարմանը, առցանց և օֆլայն ակտիվիզմ իրականացնելուն և այլն: Մասնակիցները տեղեկացան, թե ինչպես ճիշտ աշխատել այն անձանց հետ, որոնք դեռ բավարար գիտելիքներ չունեն գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության վերաբերյալ, և մշակեցին Տրանս և ԼԳԲԻՔ շարժմանը նպաստելուն ուղղված ակտիվիզմի ռազմավարություններ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն շարունակելու է պարբերաբար կազմակերպել տարաբնույթ դասընթացներ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց հզորացնելու նպատակով և նրանց զինելով բոլոր այն հմտություններով, որոնք անհրաժեշտ են գենդերային բռնության դեմ պայքարելու, սոց ցանցերում ատելության խոսքի դեմ առցանց և օֆլայն ակտիվիզմ իրականացնելու, ատելության հանցագործություններից ու խտրականությունից պաշտպանվելու, մարդու իրավունքների խախտման դեպքերը կանխելու, մարտահրավերներին դիմակայելու ու սոցիալական ներառականությանը նպաստելու համար:

ՏՐԱՆՍ ԵՎ ԼԳԲԻՔ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԲԱՑ ԿԱՆՉ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան Հասարակական Կազմակերպությունը ուրախ է տեղեկացնել, որ ԻԼԳԱ Եվրոպայի ֆինանսական աջակցությամբ հուլիսի 3-ին տեղի կունենա Տրանս և ԼԳԲԻՔ Համերաշխության առցանց ֆորում: Այս միջոցառումը նպատակ ունի համախմբել Հայաստանի Տրանս և ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցիչներին և Արևմտյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների Տրանս ակտիվիստներին՝ խթանելու փորձի և գիտելիքների փոխանակումը և ամրապնդելու համերաշխությունը ԼԳԲՏԻՔ անձանց շրջանում:

Ովքե՞ր կարող են մասնակցել.

Տրանս և ԼԳԲԻՔ Համերաշխության առցանց ֆորումին կարող են մասնակցել Տրանս և ԼԳԲԻՔ անձինք, ոլորտում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներ, սեքս աշխատողներ, ակտիվիստներ և թեմայով հետաքրքրված անձինք ՀՀ բոլոր մարզերից և տարածաշրջանի այլ երկրներից: Ֆորումի աշխատանքային լեզուն անգլերենն է, որը կուղեկցվի հայերեն թարգմանությամբ: Մասնակցելու համար խնդրում ենք լրացնել հետևյալ ձևաթուղթը՝

https://www.surveymonkey.com/r/JSTTQP6:

Տրանս և ԼԳԲԻՔ Համերաշխության ֆորումի բանախոսներն են լինելու տրանս ակտիվիստներ Միջին Արևելքից և Կենտրոնական Ասիայից, ովքեր կկիսվեն Տրանս և ԼԳԲԻՔ իրավունքների պաշտպանության իրենց փորձով՝ ներկայացնելով յուրաքանչյուր երկրի Տրանս և ԼԳԲԻՔ իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները: Միջոցառումը ներառելու է նաև ինտերակտիվ հարց ու պատասխանի մաս, որը մասնակիցներին թույլ կտա անմիջականորեն ներգրավվել բանախոսների հետ երկխոսության մեջ և ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հուսով է, որ, ծանոթանալով տարբեր տրանս ակտիվիստների տեսանկյուններին և անցած ճանապարհին, մասնակիցները կբարելավեն իրենց պատկերացումները տարբեր տարածաշրջաններում Տրանս և ԼԳԲԻՔ ակտիվիզմի մասին և ֆորումը կծառայի որպես կապեր հաստատելու, փորձի փոխանակման և միմյանց ակտիվիզմից ներշնչվելու հարթակ: Մենք հավատում ենք, որ միավորվելով և միմյանցից սովորելով՝ կարող ենք ստեղծել ավելի ներառական և աջակցող միջավայր բոլոր ԼԳԲՏԻՔ անձանց համար:

ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՄԲԵՐՈՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆՑՆԵԼՈՒ ԿՈՉԵՐ TIKTOK-ՈՒՄ

Մեկ շաբաթ առաջ՝ սույն թվականի հունիսի 13-ին, «@maxutka_arm» անունով գրանցված օգտատերը TikTok սոցիալական հարթակում տեղադրել է հրապարակում, որտեղ կոչ է անում բռնության ենթարկել ԼԳԲՏԻՔ անձանց: Մասնավորապես, սույն օգտատերը գրել է, որ Երևանում ձևավորվում է նոր խմբավորում, որը քաղաքը ազատելու է նույնասեռականներից, գրեք անձնական նամակ: Հոլովակը մեկ շաբաթվա ընթացքում ավելի քան 37800 դիտում և 200-ից ավել մեկնաբանություն է հավաքել: Մեկնաբանությունների ճնշող մեծամասնությունը ողջունել է նախաձեռնությունը, բազմաթիվ մարդիկ սպանության և բռնության կոչեր են արել, մի քանի տասնյակ մարդիկ պատրաստակամություն են հայտնել միանալ խմբին: Որոշ օգտատերեր հանրայնորեն տրամադրել են իրենց հեռախոսահամարները կամ տելեգրամյան հաշվի անունը՝ կազմակերպվող խմբին միանալու համար, իսկ շատերը գրել են, որ նամակով են տեղեկացրել իրենց տվյալների մասին: Մեկ այլ օգտատեր՝ «@xx_armiran_xx_official» անունով, մեկնաբանություններում առաջարկել է համագործակցել իրենց հետ, քանի որ իրենք նույնպես պատրաստվում են բացել նման խումբ: Նույն օրը «@maxutka_arm» օգտատերը տեղադրել է ևս մի տեսանյութ, որտեղ տեղեկացնում է, որ իրենք «14-15 տարեկան են, և միանալ ցանկացողները թող գրեն իրենց տվյալները՝ viber-ով խումբ ձևավորելու ու քննարկելու համար»: Այս տեսանյութի մեկնաբանություններում նույնպես բազմաթիվ անձինք տրամադրել են իրենց տվյալները և ցանկություն հայտնել միանալ խմբին:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբանական թիմը այս հրապարակումների վերաբերյալ նյութեր է պատրաստում ՀՀ ոստիկանություն դիմելու համար:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն խիստ դատապարտում է սեռական կողմնորոշվածությամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնությունը և հետամուտ է լինելու այս հրապարակումների հեղինակների բացահայտմանը և պատասխանատվության ենթարկելուն: Ցանկանում ենք ընդգծել, որ վերջին տարվա ընթացքում նկատվում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ բռնության կոչերի և ֆիզիկական բռնության ենթարկելու դեպքերի աճ, ինչի վկայությունն են վերջին տարվա ընթացքում փաստագրված ֆիզիկական բռնության դեպքերը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հետևողականորեն հավաքագրում և փաստագրում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականության և բռնության դեպքերը: Այս տարի ՀՀ քննչական կոմիտեն և TikTok-ը ձեռք են բերել համաձայնություն սոցիալական հարթակում հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման դեպքերում արագ արձագանքման և անհրաժեշտ տեղեկատվության հրատապ փոխանակման մեխանիզմների գործարկման վերաբերյալ, ուստի հորդորում ենք ՀՀ քննչական կոմիտեին պատշաճ հետաքննություն իրականացնել օրինախախտներին արագ հայտնաբերելու, պատասխանատվության ենթարկելու և Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ բռնությունը հավերժացնող անպատժելիության մթնոլորտը վերացնելու համար:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 20-ը Փախստականների համաշխարհային օրն է, ամեն տարի այս օրը ՄԱԿ-ը, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը և աշխարհի բազմաթիվ քաղաքացիական խմբավորումներ իրականացնում են փախստականների համաշխարհային օրվան նվիրված միջոցառումներ, որպեսզի հանրության ուշադրությունը հրավիրեն միլիոնավոր փախստականների և ամբողջ աշխարհում տեղահանված անձանց հիմնախնդիրներին, որոնք ստիպված են եղել պատերազմի, հակամարտության և հալածանքի պատճառով փախչել իրենց տներից:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը 2016 թ.-ից ի վեր իր առաջնահերթությունների մեջ ներառել է Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած բազմաթիվ ԼԳԲՏԻՔ փախստականների շահերի պաշտպանությունը և սոցիալական օժանդակության տրամադրումը: Հատկապես վերջին տարիների ընթացքում տեղի է ունեցել դեպի Հայաստան փախստականների զանգվածային հոսք Իրանի Իսլամական Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից և Ուկրաինայից՝ պայմանավորված այդ երկրների ներքաղաքական զարգացումներով և միջազգային հարաբերություններով: ՀՀ տեղափոխված անձանց շրջանում մեծ թիվ են կազմում նաև ԼԳԲՏԻՔ անձինք, ովքեր ստիպված են եղել լքել իրենց երկիրը խտրականությունից և հալածանքից զերծ մնալու համար: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը փախստական ԼԳԲՏԻՔ անձանց ներառել է իր շահառուների շրջանում՝ իրականացնելով սոցիալական աջակցության ծրագրեր և տրամադրելով անհետաձգելի իրավաբանական աջակցություն՝ ապաստան գտնելու, փաստաթղթերի դիմումների և այլ հարցերով:

Փախստականների համաշխարհային օրվա շրջանակում կարևոր է ընդգծել, որ ցավոք բազմաթիվ են նաև Տրանս և ԼԳԲԻՔ անձինք, ովքեր ստիպված են լքել Հայաստանը՝ պայմանանավորված ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ շարունակական խտրականությամբ և բռնությամբ: Հայաստանի Հանրապետությունում առկա է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամաբ բռնությունը հավերժացնող անպատժելիության մթնոլորտ՝ պայմանավորված թերի օրենսդրական կարգավորումներով, խտրականությունը քրեականացնող օրենքի բացակայությամբ և անկատար իրավակիրառ պրակտիկաներով, ինչը պարարտ հող է ստեղծել Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ոտնձգությունների ու բռնության համար. միայն վերջին մեկ տարվա ընթացքում գրանցվել է առնվազն 8 տրանս անձանց երկիրը լքելու և Եվրոպական երկրներում կամ ԱՄՆ-ում ապաստան հայցելու փաստագրված դեպք:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը կանգնած է փախստական դարձած Տրանս և ԼԳԲԻՔ անձանց կողքին և պայքարելու է նրանց շահերի պաշտպանության և իրավահավասարության ապահովման համար: Միասին մենք շարունակելու ենք աշխատել, որ բոլոր Տրանս և ԼԳԲԻՔ անձինք ունենան միջազգային պաշտպանության և ապահով ապաստան գտնելու իրավունք՝ փախչելով բռնությունից, հետապնդումից, պատերազմից կամ աղետից իրենց բնակության վայրում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՄՍՎԱ ԱՌԹԻՎ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

Հունիսի 21-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի ներկայացուցիչները հրավիրված էին Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանի կողմից կազմակերպված ընդունելությանը՝ Հպարտության ամսվա կապակցությամբ:

Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանում բնակվող ԼԳԲՏԻՔ համայնքի ներկայացուցիչներ, իրավապաշտպաններին, ոլորտում գործող տարբեր կազմակերպությունների աշխատակիցներ և համախոհներ:

Դեսպան Քրիստինա Քվինն իր կեցավայրում ողջունեց հյուրերին՝ իր խոսքում նշելով, որ յուրաքանչյուր ոք՝ անկախ ռասայական, ազգային պատկանելությունից, սեռից, գենդերային ինքնությունից, սեռական կողմնորոշվածությունից, հաշմանդամության կարգավիճակից, տարիքից, կրոնից կամ դավանանքից արժանի է հավասար, արժանապատիվ վերաբերմունքի և պաշտպանության:

ԼԳԲՏԻՔ անձանց աջակցելը Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության ամրապնդման և իրավական հավասարության հաստատման անբաժանելի մասն է:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կարևորում է ԱՄՆ դեսպանության կողմից նման միջոցառումների կազմակերպումը և բարձր է գնահատում դեսպանատան աշխատանքները ԼԳԲՏԻՔ անձանց տեսանելիության բարձրացման և իրավահավասարության հաստատման գործում:

ՀԱՐԱՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ, ՄԱՍ 1-ԻՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը նախաձեռնել է այս հարացազրույցների շարքը՝ նպատակ ունենալով արժեվորել Տրանս և ԼԳԲԻՔ ակտիվիստներին, կիսվել նրանց պատմություններով, բարձրաձայնել բռնության դեպքերի մասին և վեր հանել Հայաստանում առկա խնդիրները: Մեր առաջին զրուցակիցը, ով նախընտրեց անանուն մնալ, 21 տարեկան տրանս անձ է, ով սովորում է Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանում և, ականատես լինելով Հայաստանում տրանս անձանց համար բժկական ծառայությունների սահմանափակ հասանելիությանը ու մասնագետների բացակայությանը, նպատակ ունի մասնագիտանալ ներզատաբանության (էնդոկրինոլոգիայի) մեջ:

Ի՞նչ հարաբերություններ ունեք ընտանիքի անդամների հետ:

Հայրս մահացել է, երբ երկու տարեկան եմ եղել, մայրիկիս հետ եմ ապրում: Փոքր տարիքից էլ նկատելի են եղել իմ վարքի մեջ որոշակի փոփոխություններ, ու եկավ մի տարիք, որ հասկացա՝ ես չեմ կարող ուղղակի այսպես փակ ապրել ու միանգամից, ուղիղ ձևով մայրիկիս պատմեցի ամբողջ իրավիճակը, իմ գենդերային ինքնության մասին: Իհարկե սկզբնական շրջանում մի քիչ դժվար էր, բայց հիմա նա ինձ ընդունում է այնպիսին, ինչպիսին կամ: Ընդհանրապես ես իմ բարեկամների հետ շատ հազվադեպ եմ շփվում, ու, ես ինչքանով որ տեղյակ եմ, հիմնականում դա կապված է իմ կողմնորոշվածության հետ: Ես միայն իմ քույրերի հետ եմ շփվում, շատ մտերիմ եմ:

Ո՞րն է տարբերությունը Երևանի և մարզերում ապրող ԼԳԲՏԻՔ համայնքի անդամների միջև:

Հրազդանը փոքր քաղաք է, մարդիկ բավականին նկատելի են, ու մեկը մյուսին դեմքով ճանաչում է: Բնական է, որ ամեն անգամ ինձ տեսնելուց անտարբեր չեն անցնում, հետաքրքրություն է առաջանում: Ինչ-որ տեղ այդ հետաքրքրությունը արդեն վերածվում է խտրականության և բռնության: Իսկ Երևանում ավելի քիչ դեպքեր են եղել, հիմնականում տարբերությունը այն է, որ Երևանում խտրականությունը համեմատաբար քիչ է:

Ես երկու մոտ ընկերուհի ունեի, իմ ***դասղեկը*** *իրենց ու մյուս աղջիկներին համոզում ու* ***հրահրում էր,*** *որ ինձ հետ չշփվեն, որ ես կարողանամ* ***տղաների շրջապատ ինտեգրվեմ:***

Ո՞րտեղ եք սովորում: Ի՞նչ կրթություն եք ստացել:

Ես դպրոցում բավականին լավ առաջադիմություն եմ ունեցել, ու ինձ որպես կրթական էտալոն էին դիտարկում: Խտրականությունը ավելի նկատելի դարձավ վերջին տարիներին, այնպես էր ստացվել, որ ինձ հետ սովորող աշակերտների մեծամասնությունը տղաներ էին, ու անընդհատ իրենք ինձ առանձնացնում էին, ու ես ինքնավնասումներ ունեմ, դրա մասին էին հանրայնացրել դպրոցում: Փոքր տարիքում մեր դասարանի երեխաները ուրիշ դասարանի երխաների հետ սպասում էին՝ երբ եմ դուրս գալու դասարանից, որ ինձ ծեծեն և վնասեն: Ու ամեն անգամ դասղեկիս դիմելուց հետո ես բացասական պատասխան եմ ստացել: Ես երկու մոտ ընկերուհի ունեի, ու իմ դասղեկը իրենց ու մյուս աղջիկներին համոզում ու հրահրում էր, որ ինձ հետ չշփվեն, որ ես կարողանամ տղաների շրջապատ ինտեգրվեմ:

Հիմա բժշկական համալսարանում եմ սովորում ու հենց առաջին օրվանից հասկացա, որ այստեղ լրիվ տարբեր մարդիկ են, անտարբեր են իմ նկատմամբ, ինչ-որ տեղ անգամ դրական են վերաբերվում: Նույնը դասախոսական կազմը, ես պիրսինգներով եմ դասի գնացել, ինձ միշտ ասել են՝ շատ սիրուն ես:

Կարողացե՞լ եք մասնագիտությամբ աշխատանք գտնել:

Ես սկզբնական շրջանում սեքս աշխատանքով եմ զբաղվել, հետագայում որպես խորհրդատու եմ աշխատել մարմնի խնամքի միջոցների խանութում, սկզբում շատ վախեցած էի, բայց տնօրենը բավականին աղեկվատ էր, անգամ ամանորին ինձ ականջող նվիրեց: Բայց հիմա խանութը փակվել է, և ես չեմ աշխատում: Տրանս անձինք, եթե համաեմատենք մյուս ԼԳԲԻՔ անձանց հետ, ավելի տեսանելի են, այլ անձինք կարող են աշխատել ու թաքցնել իրենց գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշվածությունը ու խնդիրներից խուսափել:

Երբևէ ենթարկվե՞լ եք ֆիզիկական կամ այլ տիպի բռնության:

Ամենամեծ բռնության դեպքը, որ իմ համար շրջադարձային է եղել, անցած տարի հունիսի 24-ին է տեղի ունեցել: Հրազդանում մի խումբ դեռահասներ իմ վրա էին հարձակվել՝ փայտերով, մահակներով, դանակներով, ու չորս կողմից ինձ շրջապատել էին: Չգիտեմ այդ պահին ինչ երկնային ուժ էր, որ մանկապարտեզ տեսա, մտա օգնություն խնդրեցի: Ոստիկանությունը չէր արձագանքում ընդհանրապես, մի ժամից ավել սպասել եմ, որ ոստիկանները հասնեն, այդպես էլ չեկան, ես եմ ոստիկանություն գնացել: Դիմումին ընթացք չի տրվել, քանի որ իմ բողոքը հիմնականում այդ մասնակիցներից մեկի դեմ էր, ով իրենց գլխավորն էր: Բայց քանի որ իր 16 տարեկանը չէր լրացել, ու չնայած, որ արդեն իսկ հաշվառված էր տարբեր հանցագործությունների համար, որևէ իրավական պատասխանատվության չենթարկվեց: Դրանից հետո մի տարի է արդեն հոգեբանի մոտ եմ այցելում:

Մյուս դեպքը տեղի է ունեցել 2020 թ-ի օգոստոսի 13-ին: Ես որոշ ժամանակ սեքս աշխատանքով եմ զբաղվել Երևանում, ու հանդիպել էի մի տղայի հետ իր մեքենայում: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ինքը խնդրեց ինձնից իմ հեռախոսը, որ զանգի ընկերոջը, ու հետո ուղղակի դանակը հանեց ու սպառնաց, որ եթե հեռախոսը իր մոտ չմնա, ինձ կվնասի: Դեպքի առնչությամբ Արաբկիրի ոստիկանության բաժանմունք եմ դիմել, քննիչի վերաբերմունքը վերջին աստիճանի խայտառակություն էր. ոչ հոգեբանական աջակցություն, ոչ էմպատիա, ոչ մի աջակցություն չկար, ու անգամ ինչ-որ տեղ այդ տղային էր պաշտպանում: Ես ցանկացա անգամ քննիչին փոխեմ, բայց ինձ այդ հնարավորությունը չտվեցին: Ու այդպես գործը փակվեց գնաց:

Որպես ապագա բժիշկ՝ ի՞նչ եք կարծում, արդյո՞ք տրանս անձանց համար Հայաստանում ապահովված են անհրաժեշտ բժշկական ծառայությունները:

Նախ առաջին հերթին իմ համար՝ որպես ապագա բժիշկի, կարևոր է ինչպես է պացիենտը ներկայանալու, ԼԳԲՏԻՔ համայնքի ներկայացուցիչները պետք է իմանան՝ ուր են գնում, ինչ ձևով պետք է ներկայանան, ինչ խնդիրներ կարող են առաջանալ: Բարեփոխումների վերաբերյալ կասեի, որ անպայման պետք է բժիշկները անցնեն վերապատրաստումներ ԼԳԲՏԻՔ անձանց հետ շփվելու վերաբերյալ: Ես բավականին քիչ եմ բժշկի դիմում, բայց վերջերս գնացել էի մեր տեղական պոլիկլինիկան, շատ ահավոր վերաբերմունքի արժանացա, որ անգամ սիմպտոմները թվարկելուց բժիշկը ինչ որ հիվանդություն է ասում՝ առանց ստուգումների, անալիզների, հիմնվելով կարծրատիպերի վրա՝ պայմանավորված իմ գենդերային ինքնությամբ: Ու բժշկական դիանտոլոգիա հասկացություն գոյություն ունի, այսինքն վերաբերմունքը, հիվանդի հետ շփումը, ու էտ ամեն ինչը բացակայում էր իրենց մոտ: Բժիշկներից մեկը անգամ ուզում էր ինձ արական հորմոնալ դեղորայք նշանակի՝ համարելով որ ես ունեմ շեղում: Եվ դա իհարկե դեռ նեղ մասն է խնդրի: Հայաստանում կոնկրետ մասնագետի բացակայության խնդիր կա, քանի որ էնդոկրինոլոգը երբ որ վերապատրաստվում ու դառնում է բժիշկ, իր կրթության մեջ ներառված չէ տրանս անձանց վերափոխումը, հորմոնային թերապիան, ԼԳԲՏԻՔ համայնքի հետ աշխատանքի առանձնահատկությունները: Հետևաբար եթե կրթական մասը ներառվի համալսարանական կրթության մեջ, ինձ թվում է հարցը արագ կլուծվի: Ներկա իրավիճակում, բացի դրանից, ամենամեծ խնդիրներից մեկը դեղորայքի բացակայությունն է, ուղղակի կանանց համար նախատեսված ինչ-որ հակաբեղմնավորիչներ կամ դաշտանային ցիկլի կարգավորիչ դեղեր են տրանս անձինք օգտագործում որպես հորմոնալ թերապիա, ինչը ուղղակի աբսուրդ է, հատկապես որ կոնկրետ դեղաչափեր նույնպես սահմանված չեն, որ գոնե յուրաքանչյուրին անհատապես նշանակվեն: Ես ցանկանում եմ Հայաստանում մնալ, իհարկե ժամանակ առ ժամանակ արտերկիր գնալ վերապատրաստվելով, բայց ես ուզում եմ էնդոկրինոլոգ դառնալ ապագայում, ու կարծում եմ Հայաստանում այդ մասնագետի կարիքը շատ կա:

G|M|F The German Marshall Fund of the United States
STRENGTHENING TRANSATLANTIC COOPERATION

B|S|T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 21-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը մասնակցել է Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության կողմից կազմակերպված առցանց միջոցառմանը՝ նվիրված Հպարտության ամսվան: Իր ելույթում Լիլիթը ընդգծել է Հայաստանում Տրանս անձանց իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները և նշեց մի շարք անհրաժեշտ գործողությունները, որոնք կարող ենք միասին ձեռնարկել՝ հանուն ԼԳԲՏԻՔ մարդկանց պաշտպանության Հայաստանում և ամբողջ աշխարհում:
Ստորև կարող եք կարդալ Լիլիթ Մարտիրոսյանի ուղերձից ոգեշնչող մի հատված:

#pride2023 #RightSideNGO #BST #GMF

Ես Լիլիթ Մարտիրոսյանն եմ, տրանս կին և ակտիվիստ Հայաստանից: Ես «Իրավունքի կողմ» ՀԿ-ի հիմնադիրն ու նախագահն եմ՝ կազմակերպություն, որը 2016 թվականից աշխատում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավունքները պաշտպանելու համար: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հպարտ է, որ վերջին հինգ տարիներին Սևծովյան Վստահության կազմակերպության շնորհառուն է: Այսօր ես այստեղ եմ, որպեսզի ձեզ հետ նշեմ Հպարտության ամիսը: Մենք տոնում ենք ԼԳԲՏ համայնքի գոյությունը և նրա պայքարը հանուն հավասարության: Մենք նշում ենք այն առաջընթացը, որը ձեռք է բերվել և վերստին հանձն ենք առնում այն աշխատանքը, որը դեռ պետք է կատարվի հայ հասարակության մեջ:

Չափազանց երկար ժամանակ Հայաստանում ԼԳԲՏ անձինք ենթարկվել են խտրականության և պիտակավորվել որպես հիվանդ: Համայնքի անդամներին զրկել են աշխատանքից, բնակարանից և առողջապահությունից: Երկար տարիներ մենք ենթարկվել ենք բռնությունների և ոտնձգությունների, անտեսման ու ծաղրի: Բայց ես ուզում եմ ասել՝ մենք մենակ չենք: Հայաստանում շատ մարդիկ կան, որ պայքարում են մեր իրավունքների համար: Մենք դաշնակիցներ ունենք միջազգային կազմակերպություններում, ինչպիսիք են Սևծովյան Վստահության կազմակերպությունը, լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակությունը: ԼԳԲՏ համայնքում ունենք ակտիվիստներ, ովքեր երբեք չեն հանձնվում, պայքարում են համայնքի իրավունքների համար և մեծ առաջընթաց են գրանցում: Ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորին, քանի որ նրանց աջակցությամբ մենք ամեն օր ավելի ենք ուժեղանում:

https://www.gmfus.org/news/protecting-trans-rights-armenia?fbclid=IwAR086RPnx-jgco0OY-qMbhusa_bZjhRug48DZ_ujN_Zx_KnJhb7k6E4U6bo

G|M|F The German Marshall Fund of the United States
STRENGTHENING TRANSATLANTIC COOPERATION

B|S|T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 21-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը մասնակցել է Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության կողմից կազմակերպված առցանց միջոցառմանը՝ նվիրված Հպարտության ամսվան: Իր ելույթում Լիլիթը ընդգծել է Հայաստանում Տրանս անձանց իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները և նշեց մի շարք անհրաժեշտ գործողությունները, որոնք կարող ենք միասին ձեռնարկել՝ հանուն ԼԳԲՏԻՔ մարդկանց պաշտպանության Հայաստանում և ամբողջ աշխարհում:
Ստորև կարող եք կարդալ Լիլիթ Մարտիրոսյանի ուղերձից ոգեշնչող մի հատված:

#pride2023 #RightSideNGO #BST #GMF

Ես Լիլիթ Մարտիրոսյանն եմ, տրանս կին և ակտիվիստ Հայաստանից: Ես «Իրավունքի կողմ» ՀԿ-ի հիմնադիրն ու նախագահն եմ՝ կազմակերպություն, որը 2016 թվականից աշխատում է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավունքները պաշտպանելու համար: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հպարտ է, որ վերջին հինգ տարիներին Սևծովյան Վստահության կազմակերպության շնորհառուն է: Այսօր ես այստեղ եմ, որպեսզի ձեզ հետ նշեմ Հպարտության ամիսը: Մենք տոնում ենք ԼԳԲՏ համայնքի գոյությունը և նրա պայքարը հանուն հավասարության: Մենք նշում ենք այն առաջընթացը, որը ձեռք է բերվել և վերստին հանձն ենք առնում այն աշխատանքը, որը դեռ պետք է կատարվի հայ հասարակության մեջ:

Չափազանց երկար ժամանակ Հայաստանում ԼԳԲՏ անձինք ենթարկվել են խտրականության և պիտակավորվել որպես հիվանդ: Համայնքի անդամներին զրկել են աշխատանքից, բնակարանից և առողջապահությունից: Երկար տարիներ մենք ենթարկվել ենք բռնությունների և ոտնձգությունների, անտեսման ու ծաղրի: Բայց ես ուզում եմ ասել՝ մենք մենակ չենք: Հայաստանում շատ մարդիկ կան, որ պայքարում են մեր իրավունքների համար: Մենք դաշնակիցներ ունենք միջազգային կազմակերպություններում, ինչպիսիք են Սևծովյան Վստահության կազմակերպությունը, լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակությունը: ԼԳԲՏ համայնքում ունենք ակտիվիստներ, ովքեր երբեք չեն հանձնվում, պայքարում են համայնքի իրավունքների համար և մեծ առաջընթաց են գրանցում: Ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորին, քանի որ նրանց աջակցությամբ մենք ամեն օր ավելի ենք ուժեղանում:

https://www.gmfus.org/news/protecting-trans-rights-armenia?fbclid=IwAR086RPnx-jgco0OY-qMbhusa_bZjhRug48DZ_ujN_Zx_KnJhb7k6E4U6bo

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

© Copyright All Rights Reserved For Right Side Ngo.